# Արձանագրություն N 3/144

## ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ-ի մայիսի 13 -ի նիստի

Օրակարգ

1. Ատենախոսությունների թեմաների հաստատում /զեկ.՝ դոց. Խ. Գալստյան/:
2. Աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ մեթոդխորհրդի նախագահ Լ. Վարդանյան:
3. Ասպիրանտուրայի երաշխավարության հարցը /զեկ. Խ. Գալստյան/:
4. Ընթացիկ հարցեր:

**Խորհուրդը որոշեց.**

1. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

ա/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ ***Նարեկ Գրիգորյան***՝ «Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգային հիմքերը», ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Ալեքսանյանին:

բ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ ***Ժաննա Հարությունյան***՝ «Ֆրանսիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը աֆրիկյան մայրցամաքում 1962-1991թթ.», ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար հաստատել պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ավագյանին:

« Երաշխավորել հրատարակության.

ա/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր Հ. Մանուչարյանի և ք.գ.թ. Մ.Դավթյանի "Մովսես Բաղրամյան. Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը" աշխատությունը.

բ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Մ. Վարդազարյանի "Աշխարհաքաղաքականություն" դասընթացի ծրագիրը:

գ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ամալյա Բաբայանի "Թայվանից՝ սիրով /անգլերեն լեզվով/" գիրքը:

2. Ասպիրանտուրա ընդունվելու համար երաշխավորել հետևյալ ուսանողներին.

   ա/ Միջազգային հարաբերությունների մագիստրոսներ Էրիկ Դավթյանին, Դավիդ Սարկիսյանին, Հարություն Հայրապետյանին:

   բ/ Քաղաքագիտության մագիստրոսներ Արամ Գրիգորյանին, Սևակ Հակոբյանին, Միեր Հակոբյանին:

*Խորհրդի նախագահ, պրոֆ.* *Գ. Պետրոսյան*

*Խորհրդի քարտուղար, դոց.* *Խ. Գալստյան*